

Այսպես դիտե՛լ ծալապատիկ թելերով,
 Ի՛նչ, տեսնել որ խղիունջ մ'այսօր կը չափե
 Յըսկայ շենքերն այն՝ երկու թել լորձունքով,
 Եւ խորանի մը խորշին մէջ լոկ կ'ապրի
 Բուն, սեւազգեստ ճըգնաւոր,
 Տեսնել որ լուռ կը փըտին
 Աւերներու տակ հերոսի բազուկներ,
 Գանկեր, սըրտեր՝ որոնց արիւնը եղաւ
 Թոյն՝ իժերուն, ա՛յնչափ որ լի էր ոխով.
 Տեսնել որ փլած պատուարներու, դըղեակի
 ճեղքերուն մէջ կը մեռնի
 Շող մ'արեւու, Անուն մը հին, Ազգ մը մեծ,
 Եւ գահերու բեկորներուն վրայ թափուր
 Արծիւն ամպէն կը ծըրտէ՛...
 Ի՛նչ, մինչդեռ վարը, անդին,
 Այս ջընջումին հաւասար
 Կը ջընջուին, կ'այլասերին հոգիներ
 Խեղդըւելով նոյնիսկ իրե՛նց արեան մէջ,
 Կամ մալ ու կուրտ եգի պէս
 Ժուժով մը վատ, իւրաքանչիւր հարուածի
 Ներքեւ ջըլատ կ'ըսեն. -Լըծէ՛: -Ո՛հ, ի՛նչ, ի՛նչ,
 Առջեւը այս ամէնուն,
 Շուրջիս այս մութ ծըփանքին մէջ դիերու,
 Ոսկըրներու, նըշխարներու, արիւնի,
 Մընալ կանգուն, մինաւորիկ, անկարո՛ղ,
 Եւ չը կըրնալ այս թոհրոհէն հանել դուրս
 Վերածընո՛ւնդ, վերածընո՛ւնդ մ'արփագեղ...
 Ո՛վ այպանք, ո՛վ նախատինք,
 Ուրեմն ինչո՞ւ ապրիլ, ինչո՞ւ ընդունայն
 Յայրենիքի անունն ասանկ մըռընչել,
 Երբոր Ողջերը թըմրած